

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց ձեռագրական հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Երնջակի ս. Կարապետի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը սկզբնավորվել է ԺԴ դարի ութսունական թվականներին՝ վանքի հիմնադրման հետ միաժամանակ:

Թե ինչպիսի ձեռագրեր է բովանդակել հավաքածուն և քանակական ինչպիսի փոփոխություններ է կրել իր ավելի քան հինգհարյուրամյա գոյության ընթացքում, դժվար է ասել, որովհետև չեն եղել կամ չեն պահպանվել համապատասխան ցանկեր ու ցուցակներ:

Վանքիս ձեռագրերի բովանդակության և թվաքանակի մասին այսօր գաղափար կարող ենք կազմել միայն Արիստակես Սեդրակյանի և Մեսրոպ Սմբատյանցի կազմած ցանկերի միջոցով, որոնց և անդրադառնում ենք ստորև:

1. Արիստակես վրդ. Սեդրակյան, Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակայ, Վաղարշապատ, 1872.—Ա. Սեդրակյանը իր սույն աշխատության մեջ՝ «Ձեռագիր մատեանք վանիցս» ենթախորագրի տակ (էջ 26—33) անդրադառնալով վանքի գրատանը եղած ձեռագրերին, գրում է. «Ձիք տարակուսս, որ այս մենաստանն պիտի հարուստ գրադարան ունեցած լինի... Դժբախտաբար... այժմու ունեցածներն միայն քանի մի հատ ձեռագիր Աստվածաշունչ և Ավետարան են...»: Այնուհետև Ա. Սեդրակյանը Ա—Թ թվահամարների ներքո համառոտ նկարագրությամբ տալիս է եղած գրչագրերից 9-ի պատկերը՝ 4 «Աւետարան» (№№ Ա—Դ), 3 «Աստուածաշունչ» (№№ Ե—Է), 1 «Նարեկ» (№ Ը) և 1 «Մաշտոց» (№ Թ):

Արձանագրված այդ 9 ձեռագրերից 8-ը (№№ Ա, Գ—Թ) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Ա): Բացակայում է № Բ ձեռագիրը, որի նկարագրությունը անփոփոխ կերպով բերում ենք ստորև.

№ Բ. «Աւետարան փոքրադիր, ամբողջ գեղազարդ պատկերօք, ընտիր գրչագիր՝ գրեալ ի մագաղաթի: Ունի ի վերջին յիշատակարան ստացողին-Շօռոթեցի Խօջենց Մկրտչի որդի Մահտասի Հայրապետին, այլ՝ անթուական»:

Ա. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Ա. Սեդրակյանի 1872 թ. ցուցակի)

1872թ.	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան Արդի	1872թ.	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան Արդի
Ա	—	4276	Զ	784	2732
Բ	—	—	Է	18	2587
Գ	789	3393	Ը	—	4272
Դ	785	5033	Թ	794	3035
Ե	17	2669			

2. Արիստակէս վրդ. Սեդրակեան, Ցուցակ զարդուց Ս. Կարապետի վանից Երնջակայ, 1892 (տես Մ. Սմբատյանցի «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա», Տփխիս, 1904, էջ 115).— Այս անտիպ գույքացուցակը կազմված է 1892 թվականի նոյեմբերի 28-ին՝ ս. Կարապետի վանքի եկեղեցական սրբությունները Էջմիածին տեղափոխելու կապակցությամբ: Այդ ցուցակում № 117-ի տակ արձանագրված է 1 «Աստուածաշունչ», № 119-ի տակ՝ 2 «Աւետարան» (պայմանականորեն №№ 119ա, 119բ), № 129-ի տակ՝ 1 «Գիրք զանազան պատմութեանց», № 135-ի տակ՝ 1 «Ժողովածու» և № 156-ի տակ՝ 1 «Մաշտոց», ընդամենը թվով 6 ձեռագիր, որոնցից 2-ը (№№ 117, 156) արձանագրված են «Հնութիւնք հայրենեաց»-ի մեջ (№№ Զ, Թ), իսկ մնացած 4-ը (№№ 119ա, 119բ, 129, 135)՝ ոչ: Այդ 6 ձեռագրերն էլ այսօր առկա են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Բ):

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Ա. Սեդրակյանի 1892 թ. «Ցուցակ զարդուց»-ի)

Ա. Սեդրակյան 1898	Ա. Սեդրակյան 1872	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան Արդի	Ա. Սեդրակյան 1892	Ա. Սեդրակյան 1872	Մատենադարան «Գևորգյան»	Մատենադարան Արդի
117	Զ	784	2732	129	—	792	3531
119ա	—	786	3528	135	—	797	3037
119բ	—	787	3529	156	Թ	794	3035

Այսպիսով, Արիստակես վրդ. Սեդրակյանը իր 1872 և 1892 թթ. զույգ ցուցակներում միասին արձանագրել է 13 ձեռագիր, որոնցից Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում 12-ը:

3. Մեսրոպ արքեպս. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904.— Մ. Սմբատյանցը իր սույն գրքում «Աղքատ մատենադարան Սուրբ Կարապետի վանից» ենթախորագրի տակ (էջ 112—118) խոսելով վանքի գրատան մասին, ասում է. «...շատ աղքատ է վանքիս գրադարանը և հազիվ 4 ձեռագիր գիրք է մնացել...»: Այնուհետև Ա—Դ թվահամարների ներքո նկարագրում է այդ 4 ձեռագրերը՝ 1 «Աւետարան» (№ Ա), 1 «Յայսմաւուրք» (№ Բ), 1 «Նարեկ» (№ Գ) և 1 «Գիրք բնաբանից քարոզիչ վարդապետաց...» (№ Դ): Այս 4 ձեռագրերից 2-ը (№№ Ա, Գ) նկարագրված է Սեդրակյանի «Հնութիւնք հայրենեաց»-ի մեջ (№№ Ա, Ը), իսկ մյուս 2-ը (№№ Բ, Դ)՝ ոչ: Նկարագրված 4 ձեռագրերից 3-ը (№№ Ա, Գ, Դ) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Գ, I այունակ): Բացակայում է № Բ ձեռագիրը, որի նկարագրությունը բերում ենք ստորև.

№ Բ. «Յայսմաւուրք գրչեայ, կիսամաշ, որոյ ստացողն է Տեր Հապիպ քահանայն և Խաւնայ Յիսայիին, որը և ՌՃԿԵ (1716) թուին գնել է Մահլազանցի տիրացու Գէորգն»:

Վերոհիշյալ 4 ձեռագրերը կրկին անգամ Մ. Սմբատյանցը արձանագրել է «Սուրբ Կարապետի վանքի այժմեան եկեղեցական գրեանքն են» ենթախորագրի տակ (էջ 165—168), ուր դրանք զբաղեցնում են 2, 6, 20 և 23 թվահամարները (տե՛ս տախտակ Գ, II այունակ): Այստեղ նկատենք, որ այս ցանկում № 6-ի տակ «Գիրք բնաբանից քարոզիչ վարդապետաց»-ի փոխարեն, որը կհամապատասխաներ նախորդ ցանկի № Դ-ին, նշված է «Գիրք զանազան պատմութեանց», մի բան, որ բացարձակ թյուրիմացություն է, քանի որ այն (տե՛ս Ա. Սեդրակյանի «Ցուցակ զարդուց», № 129), հենց իր՝ Մ. Սմբատյանցի վկայությամբ 1892 թվականին տարվել էր Էջմիածին:

Նույն 4 ձեռագրերից 3-ը (տե՛ս տախտակ Գ, այունակ I Ա, Գ, Դ) երրորդ անգամ Մ. Սմբատյանցը արձանագրել է «Յիշատակարանք յիշեալ ձեռագրաց...» ենթաբաժնում (էջ 174—316), առանց հերթական թվահամարների: Այդ 3 ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք [Ա], [Բ], [Գ], [Ա]—էջ 191, [Բ]—էջ 192, [Գ]—էջ

192—193. տե՛ս տախտակ Գ, III սյունակ):

Նույն 4 ձեռագրերը չորրորդ անգամը լինելով, Մ. Սմբատյանցը արձանագրել է «Ցուցակ յիշատակարանաց ձեռագիր մատենից...» ընդհանուր տախտակի մեջ (տե՛ս 316—317 էջերի միջև եղած ներդիրը)՝ 11, 92, 169 և 184 թվահամարների ներքո (տե՛ս տախտակ Գ, IV սյունակ):

Բացի այս 4 ձեռագրերից, որոնք 1897 թվականին գտնվում էին ս. Կարապետի վանքի գրատանը, նույն տեղում № 71-ի տակ Մ. Սմբատյանցը արձանագրել է ևս 1 «Աւետարան», որը չի նշված Սեդրակյանի զույգ ցուցակներում (արդի № 3145): Այդ ձեռագիրը 1898 թվականին նվիրաբերված է Խրիմյան Հայրիկին՝ նրա օծման հանդեսի ժամանակ մեծ հավանականությամբ հենց վանահայր Սեդրակյանի ձեռքով (տե՛ս տախտակ Գ, IV սյունակ):

Այս բոլորից դուրս, Մ. Սմբատյանցը իր գրքում խոսում է նաև Երնջակի ս. Կարապետի վանքի 3 Աստվածաշնչերի մասին: Այսպես.

— Էջ 115-ում տալով Ա. Սեդրակյանի կողմից 1893 թվականին ըստ «Ցուցակ զարդուց»-ի Էջմիածին փոխադրված 6 ձեռագրերի ցանկը (տե՛ս տախտակ Բ) և № 117 ձեռագիրը (արդի № 2732) համարելով առաջին Աստվածաշունչը, գրում է. «Այս վանքից մի ձեռագիր Աստվածաշունչ ևս տարել են Էջմիածին՝ հրամանավ... Գեորգ կաթողիկոսի 1876 թվին...»: Նշված Աստվածաշունչը Ա. Սեդրակյանի «Հնութիւնք հայրենեաց»-ի № Ե ձեռագիրն է (արդի № 2669): Այս նույն Աստվածաշնչի մասին Մ. Սմբատյանցը խոսում է նաև գրքի 339-րդ էջում (№ Բ) և 347—348 էջերում՝ առանց թվահամարների հիշատակման:

— Էջ 117-ում Մ. Սմբատյանցը անդրադառնալով Ա. Սեդրակյանի «Հնութիւնք հայրենեաց»-ի № 2 ձեռագրին, այն համարում է երրորդ Աստվածաշունչը և ավելացնում. «բայց այս երրորդ Աստվածաշունչը չերևի ի միջի...»: Սմբատյանցը թյուրիմացության մեջ է, որովհետև № 2 ձեռագիրը «Ցուցակ զարդուց»-ի նույն № 117 ձեռագիրն է (արդի № 2732): Իրականում թվով երրորդ Աստվածաշունչը «Հնութիւնք հայրենեաց»-ի № Է ձեռագիրն է (արդի 2587), որը նույնպես 1876 թվականին Էջմիածին տարված լինելով, չի մտել և չէր կարող մտնել «Ցուցակ զարդուց»-ի մեջ:

Նշված երեք Աստվածաշնչերը՝ հին և նոր թվահամարների մեր կազմած համեմատական տախտակում դյուրությամբ արտահայտելու համար (տե՛ս տախտակ Գ, V սյունակ), պայմանականորեն նշանակում ենք [Ա], [Բ], [Գ] թվահամարներով ([Ա]—2669, [Բ]—2732, [Գ]—2587):

Այսպիսով, Մ. Սմբատյանցը Երնջակի ս. Կարապետի վանքի գրատան ձեռագրերից իր գրքում արձանագրել է 8-ը, որոնցից 4-ը (տե՛ս տախտակ Գ, սյունակ I, II, III և IV) 1897 թվականին գտնվում էին տեղում, իսկ մնացած 4-ը՝ Էջմիածնում: Այդ 8 ձեռագրերից 5-ը արձանագրված են Ա. Սեդրակյանի զույգ ցուցակներում, իսկ մնացած 3-ը՝ ոչ:

Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատյանցի «Երնջակ»-ի)

«Երնջակ»					Սեդրակյան		Մատենադարան	
I էջ 112—118	II էջ 165—168	III էջ 191—193	IV էջ 316—317 ներդիր	V էջ 115, 117 339, 347	1872	1892	«Գեորգյան» հավաքածու	Արդի
Ա	2	[Ա]	11	—	Ա	—	—	4276
Բ	20	—	169	—	—	—	—	—
Գ	23	[Բ]	184	—	Բ	—	—	4272
Դ	6	[Գ]	92	—	—	—	—	4421
—	—	—	71	—	—	—	852	3145
—	—	—	—	[Ա]	Ե	—	17	2669
—	—	—	—	[Բ]	Զ	117	784	2732
—	—	—	—	[Գ]	Է	—	18	2587

Այսպիսով, Ա. Սեդրակյանն ու Մ. Սմբատյանցը միասին Երնջակի ս. Կարապետի վանքում տեսել և արձանագրել են ընդամենը 16 ձեռագիր, որոնցից 14-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Դ), իսկ մնացած 2-ի ուր լինելն առայժմ մեզ հայտնի չէ: Ամփոփելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

№ մ/մ	Ըստ ցուցակի	Քանակ	Ունկա	Բացակա
1.	Ըստ «Հնութիւնք հայրենեաց»-ի	9	8	1
2.	Հավելյալ «Ցուցակ զարդուց»-ում	4	4	—
3.	Հավելյալ «Երնջակ»-ում	3	2	1
	Ընդամենը . .	16	14	2

Առկա 14 ձեռագրերը (տե՛ս տախտակ Դ) Մատենադարան են մուտք գործել 1876—1910 թվականների ընթացքում, այդ թվում 2-ը (№№ 2587, 2669)՝ 1876-ին Գևորգ Դ-ի կարգադրությամբ, 6-ը (№№ 2732, 3035, 3037, 3528, 3529, 3531)՝ 1893-ին ըստ 1892 թվականին կազմված «Ցուցակ զարդուց»-ի, 2-ը (№№ 3033, 3145)՝ նույնպես 1893-ին, բայց «Ցուցակ զարդուց»-ից անկախ, իսկ մնացած 3-ը (№№ 4272, 4276, 4421)՝ 1910-ին Մ. Սմբատյանցի միջոցով:

Ստորև բերվող տախտակը ամփոփում է ողջ շարադրանքը (տե՛ս տախտակ Դ):

Դ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Մատենադարան		Սեղրակյան		Մմբատյանց - «Երնջակ»				
Արդի	«Գիրք յաղագս հաւատոյ»	«Հնոց թիւնք հայրենեաց» 1872	«Ցուցակ զարդուց» 1892	I էջ 112—117	II էջ 165—168	III էջ 191—193	IV էջ 316—317 նեղգիր	V էջ 115, 117, 339, 348
2587	18	Ի	—	—	—	—	—	[Գ]
2669	17	Ե	—	—	—	—	—	[Ա]
2732	784	Զ	117	—	—	—	—	[Բ]
3033	785	Դ	—	—	—	—	—	—
3035	794	Թ	156	—	—	—	—	—
3037	797	—	135	—	—	—	—	—
3145	852	—	—	—	—	—	71	—
3393	789	Գ	—	—	—	—	—	—
3528	786	—	119ա	—	—	—	—	—
3529	787	—	119բ	—	—	—	—	—
3531	792	—	129	—	—	—	—	—
4272	—	Լ	—	Գ	23	[Բ]	184	—
4276	—	Ա	—	Ա	2	[Ա]	11	—
4421	—	—	—	Դ	6	[Գ]	92	—
—	—	Բ	—	—	—	—	—	—
—	—	—	—	Բ	20	—	160	—